## ԿՈՆՎԵՆՑԻԱ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության Կառավարությունը, ցանկանալով կնքել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիա, համաձայնեցին հետևյալի մասին.

### Հոդված 1
### ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

### Հոդված 2
### ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐԸ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմինների կողմից եկամտի և գույքի նկատմամբ սահմանվող հարկերի նկատմամբ` անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտահարկ և գույքահարկ են համարվում եկամտի ընդհանուր գումարից, գույքի ընդհանուր արժեքից կամ եկամտից կամ գույքի առանձին տարրերից, այդ թվում շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներից, ձեռնարկությունների կողմից վճարվող աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարից, ինչպես նաև գույքի հավելաճից գանձվող հարկերը:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ, մասնավորապես.

ա) Հայաստանում.

i) շահութահարկ.

ii) եկամտահարկ.

iii) գույքահարկ.

(այսուհետ` հայկական հարկ),

բ) Լյուքսեմբուրգում.

i) ֆիզիկական անձանցից եկամտահարկ.

ii) կորպորատիվ հարկ.

iii) գույքահարկ.

iv) համընդհանուր առևտրի հարկ.

(այսուհետ՝ Լյուքսեմբուրգյան հարկ):

4. Սույն Կոնվենցիան կիրառվում է նաև ցանկացած նույնատիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք սահմանվում են սույն Կոնվենցիան ստորագրելուց հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ծանուցում են միմյանց իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

## Հոդված 3

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում.

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Լյուքսեմբուրգ.

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն, իսկ երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է տարածքը, ներառյալ ցամաքը, ջրերը, ընդերքը և օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը ներպետական օրենսդրության և միջազգային իրավունքի համաձայն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավազորությունը.

գ) «Լյուքսեմբուրգ» տերմինը նշանակում է Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, իսկ երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության տարածքը.

դ) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում.

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ.

զ) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ.

է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են համապատասխանաբար Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն.

ը) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է այն ձեռնարկության կողմից շահագործվող ցանկացած փոխադրում նավով, օդանավով կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցով, որի փաստացի կառավարման վայրը Պայմանավորվող պետությունում է, բացառությամբ, երբ նավը, օդանավը կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև.

թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանում` ֆինանսների նախարարը և պետական եկամուտների կոմիտեի նախագահը կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչները.

ii) Լյուքսեմբուրգում` ֆինանսների նախարարը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը.

ժ) «քաղաքացի» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ.

ii) Պայմանավորվող պետության գործող օրենքների հիման վրա` իր կարգավիճակը` որպես այդպիսին, ստացած ցանկացած իրավաբանական անձ, գործընկերություն կամ ասոցիացիա.

ժա) «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինը ներառում է մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեության իրականացում:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Կոնվենցիան ցանկացած պահի կիրառելիս նրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որն այն ունի այդ պահին այդ պետության իրավունքով այն հարկերի նկատմամբ, որոնց վրա տարածվում է Կոնվենցիան, ընդ որում` այդ պետությունում գործող հարկային օրենքներով սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ պետության այլ օրենքներով այդ տերմինին տրվող նշանակության նկատմամբ:

### Հոդված 4

### ՌԵԶԻԴԵՆՏԸ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է ցանկացած անձ, որն այդ պետության օրենքների համաձայն ենթակա է հարկման այդ պետությունում իր բնակության (գտնվելու վայրի), ռեզիդենտության, գրանցման վայրի, կառավարման վայրի կամ ցանկացած համանման այլ չափորոշիչի հիման վրա և ներառում է նաև այդ պետությունը և նրա ցանկացած իշխանության տեղական մարմին: Սակայն, այդ տերմինը չի վերաբերում որևէ անձի, որն այդ պետությունում ենթակա է հարկման միայն այդ պետության աղբյուրներից ստացած եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի նկատմամբ:

2. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթների հիման վրա ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

ա) նա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որտեղ ունի մշտական կացարան, իսկ եթե նա երկու պետություններում էլ ունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որի հետ իր անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են.

բ) եթե հնարավոր չէ որոշել այն պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ, եթե նա պետություններից ոչ մեկում չունի մշտական կացարան, ապա նա համարվում է միայն այն պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է.

գ) եթե նա սովորաբար երկու պետություններում էլ բնակվում է, կամ եթե նա սովորաբար չի բնակվում դրանցից և ոչ մեկում, ապա նա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որի քաղաքացին է.

դ) եթե նա հանդիսանում է երկու պետությունների քաղաքացի կամ դրանցից և ոչ մեկի քաղաքացի չի հանդիսանում, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը կարգավորում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթների հիման վրա ֆիզիկական անձից բացի այլ անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա նա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա փաստացի կառավարման վայրը:

### Հոդված 5

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՎԱՅՐԸ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայր» տերմինը նշանակում է գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայր» տերմինը ներառում է հատկապես.

ա) կառավարման վայրը.

բ) մասնաճյուղը.

գ) գրասենյակը.

դ) գործարանը.

ե) արհեստանոցը և

զ) հանքահորը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարների հետախուզման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. ա) Շինարարական հրապարակը, կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական աշխատանքները համարվում են տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայր, միայն եթե դրանց տևողությունը գերազանցում է տասներկու ամիսը:

բ) Ծառայությունների մատուցումը, ներառյալ խորհրդատվական ծառայությունները, ձեռնարկության կամ այդ նպատակի համար ձեռնարկության վարձած աշխատողների կամ այլ անձնակազմի միջոցով, կազմում է մշտական հաստատություն, բայց միայն երբ այդ բնույթի աշխատանքները շարունակվում են (միևնույն նախագծի համար կամ այդ նախագծի հետ կապված) այդ պետությունում ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում ընդհանուր առմամբ երեք ամիսը գերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով:

4. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ «տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայր» տերմինը չի ներառում.

ա) կառույցների օգտագործումը՝ ձեռնարկությանը պատկանող ապրանքների, արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով.

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով.

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ այլ ձեռնարկության կողմից բացառապես մշակման նպատակով.

դ) ձեռնարկության համար գործունեության կայուն վայրի պահպանումը՝ բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով.

ե) գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով.

զ) գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես «ա»-«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության կայուն վայրի ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

5. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ այն դեպքում, երբ անկախ կարգավիճակով գործակալից բացի այլ անձը, որի նկատմամբ կիրառվում է 6-րդ կետը, գործում է ձեռնարկության անունից, և ունի ու սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասությունը, ապա այդ ձեռնարկությունը համարվում է «տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայր» այդ պետությունում՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության մասով, բացառությամբ, երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 4-րդ կետում նշվածով, որը եթե իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ կետի դրույթների համաձայն այդ գործունեության կայուն վայրը չի վերածում տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի:

6. Ձեռնարկությունը չի համարվում տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայր Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ իր ձեռնարկատիրական գործունեությունն այդ պետությունում իրականացնում է բրոքերի, գլխավոր կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի

անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս պետությունում (տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկին չի դարձնում մյուսի տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրը:

## Հոդված 6

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ ԵԿԱՄՈՒՏԸ

1. Մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը դրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է տվյալ գույքը: Տերմինը, ամեն դեպքում, ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, իրավունքներ, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենքի դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտ) և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող՝ փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները. նավերը, նավակները, օդանավերը և ավտոմոբիլային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացվող եկամուտների նկատմամբ:

## Հոդված 7

## ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԱՀՈՒՅԹԸ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձևով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս

պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրին:

2. 3-րդ կետի դրույթների պահպանմամբ՝ եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրին է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույնպիսի կամ համանման պայմաններում, նույնպիսի կամ համանման գործունեություն իրականացնող միանգամայն ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրն է հանդիսանում:

3. Տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցնել տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի գործունեության նպատակներով կատարված ծախսերը, այդ թվում կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն հանգամանքից՝ կատարված են դրանք այն պետությունում, որտեղ գտնվում է այդ տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրը, թե այլուր:

Սակայն, ոչ մի այդպիսի նվազեցում չպետք է թույլատրվի այն գումարների նկատմամբ, եթե այդպիսիք առկա են, վճարված (այլ կերպ քան փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի կողմից ձեռնարկությանը, արտոնագրերից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիների, հոնորարների կամ նման վճարումների տեսքով, կամ մատուցած ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի միջոցով, կամ (բացառությամբ բանկերի) տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրին տրամադրած փոխառության համար տոկոսների միջոցով:

Նմանապես, ոչ մի գումար չի համարվի ընդունված տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի շահույթները սահմանելիս պահանջված գումարների նկատմամբ, (այլ կերպ քան փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի կողմից ձեռնարկությանը, արտոնագրերից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիների, հոնորարների կամ նման վճարումների միջոցով, կամ մատուցած ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի միջոցով, կամ (բացառությամբ բանկերի) տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրին տրամադրած փոխառության համար տոկոսների տեսքով:

4. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրին վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության տարբեր ենթամասերի միջև ձեռնարկության ընդհանուր շահույթի համամասնական բաշխման հիման վրա, ապա 2-րդ կետում ոչինչ չի արգելում այդ Պայմանավորվող պետությանը որոշել հարկման ենթակա շահույթը բաշխման այդպիսի ընդունված եղանակով. այնուամենայնիվ, բաշխման ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածի սկզբունքներին:

5. Տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրին որևէ շահույթ վերագրելու համար:

6. Նախորդ կետերի նպատակներով՝ տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրին վերագրվող շահույթը որոշվում է տարեցտարի նույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու հիմնավոր և բավարար պատճառ:

7. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնք առանձին քննարկված են սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

### Հոդված 8

### ԾՈՎԱՅԻՆ, ՆԵՐՔԻՆ ՋՐԱՅԻՆ, ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԸ

1. Միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

2. Ներքին ջրային փոխադրումներում ներառված նավակների շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ գործող միջազգային գործակալությունում մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

### Հոդված 9

### ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Այն դեպքում, երբ՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում.

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ պետության ձեռնարկության շահույթի կազմում ներառում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս պետությունում և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը պետք է հաշվեգրված լիներ առաջինը նշված պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև փոխհարաբերությունները լինեին նույնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև է, ապա այդ մյուս պետությունը կատարում է այդպիսի շահույթից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդ մյուս պետությունը համարում է ճշգրտումը արդարացի: Այդպիսի ճշգրտումը որոշելիս պատշաճ կերպով պետք է հաշվի առնվեն սույն Կոնվենցիայի մյուս դրույթները, իսկ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցում են միմյանց հետ:

## Հոդված 10

## ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ պետության օրենքների համաձայն, բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի.

ա) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատերը ընկերություն է (գործընկերությունից բացի), որն ուղղակիորեն տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության գույքի առնվազն 10 տոկոսը.

բ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում:

Սույն կետը չի ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպես բաժնետոմսերից եկամուտը՝ համաձայն այն պետության օրենքների, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը, և ներդրողների շահաբաժինը առևտրային, արդյունաբերական, հանքարդյունաբերական կամ նավաշինական ձեռնարկությունում վճարված՝ շահույթին համամասնորեն և նրա կապիտալ ծախսերի հիման վրա, ինչպես նաև պարտատոմսերի դիմաց տոկոսները և վճարումները, որտեղ տոկոսների կայուն դրույքաչափից ավելիի դեպքում լրացուցիչ եկամտի նվազեցման իրավունք է տրվում՝ փոփոխելով բաշխված շահույթին համապատասխան:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի միջոցով, և մասնակցությունը, որի կապակցությամբ վճարվում են շահաբաժինները, փաստացիորեն կապված է այդպիսի տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, ապա այդ մյուս պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները, բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս պետության ռեզիդենտին կամ, երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացիորեն կապված է այդ մյուս պետությունում գտնվող տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի հետ, և չի կարող ընկերության չբաշխված շահույթը հարկել ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

## Հոդված 11

## ՏՈԿՈՍՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն, այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ, այդ պետության օրենքների համաձայն, դրանք առաջանում են, բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ 1-ին կետում նշված տոկոսները կհարկվեն միայն այն Պայմանավորվող պետությունում, որում ստացողը ռեզիդենտ է, եթե տոկոսների փաստացի սեփականատերը այդ պետության ռեզիդենտ է և.

ա) այդ պետությունն է, նրա իշխանության տեղական մարմինը կամ օրենքով նախատեսված մարմինը.

բ) եթե տոկոսները վճարվում են այն պետության կողմից, որում առաջացել են կամ նրա իշխանության տեղական մարմնի կամ օրենքով նախատեսված մարմնի կողմից.

գ) եթե տոկոսները վճարվում են փոխառության, պարտապահանջի կամ վարկի կապակցությամբ, որը պարտավորություն է, կամ կատարվել, տրվել, երաշխավորվել, կամ ապահովագրվել է այդ պետության, կամ նրա

իշխանության տեղական մարմնի, կամ արտահանող ֆինանսական գործակալության կողմից.

դ) եթե տոկոսները վճարվում են բանկի կողմից տրամադրվող ցանկացած տեսակի փոխառության կապակցությամբ:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից, անկախ հիփոթեքային ապահովումից և պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից՝ ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարները ու մրցանակները: Այնուամենայնիվ «տոկոս» տերմինը չի ներառում 10-րդ հոդվածում նշված եկամուտը:Ուշացման համար նախատեսված տույժերը սույն հոդվածի նպատակով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի միջոցով, և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացիորեն կապված է այդպիսի տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ պետության ռեզիդենտ է: Սակայն, այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձի, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրը Պայմանավորվող պետությունում է, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրը, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրը:

7. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող՝ վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը կմնա հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

## Հոդված 12

## ՌՈՅԱԼԹԻՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն, այդպիսի ռոյալթիները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ, այդ պետության օրենքներին համապատասխան, դրանք առաջանում են, բայց եթե ստացողը ռոյալթիների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը:

3. «Ռոյալթիներ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում՝ գրական, գեղարվեստական կամ գիտական աշխատանքների, ներառյալ հեռուստատառադիոհեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի, տեսաերիզների կամ ձայներիզների, ցանկացած արտոնագրի, ապրանքային նշանի, արդյունաբերական նմուշի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի օգտագործման, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ռոյալթիները՝ այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի կապակցությամբ վճարվում են ռոյալթիները, փաստացիորեն կապված է այդպիսի տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողը այդ պետության ռեզիդենտ է: Սակայն, երբ ռոյալթիներ վճարող անձի, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրը Պայմանավորվող պետությունում է, որի կապակցությամբ առաջացել է ռոյալթիներ վճարելու պարտավորությունը և այդպիսի ռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրը, ապա այդպիսի ռոյալթիները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրն է:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը կմնա հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

Հոդված 13

## ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ 6-րդ հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի, ներառյալ այդպիսի տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) օտարումից արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների, ներքին ջրային փոխադրումներում ընդգրկված նավակների կամ այդպիսի նավերի, օդանավերի, ավտոմոբիլային փոխադրամիջոցների կամ նավակների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ընկերության, որի ակտիվները հիմնականում կազմված են մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների օտարումից ստացված արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշվածից բացի՝ ցանկացած այլ գույքի օտարումից արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում օտարող անձը:

Հոդված 14

## ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԵԿԱՄՈՒՏԸ

1. 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթների պահպանմամբ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձերը, ռոճիկները և համանման այլ վարձատրությունը ենթակա են հարկման միայն այդ պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքն իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը նշված պետությունում, եթե.

ա) ստացողը համապատասխան օրացուցային տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամկետում գտնվում է մյուս

պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով, և

բ) վարձատրությունը տրվում է մյուս պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի` մյուս պետությունում ունեցած տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրը:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից` միջազգային փոխադրումներում շահագործվող նավի վրա, օդանավում կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցում, կամ ներքին ջրային փոխադրումներում ընդգրկված նավակի վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

## Հոդված 15

## ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԸ

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի անդամ` Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և համանման այլ վճարումները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

## Հոդված 16

## ԱՐՏԻՍՏՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

1. Անկախ 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներից` Պայմանավորվող պետության ռեզիդենտի` մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, ինչպիսին է թատրոնի, կինոյի դերասան, ռադիոյի կամ հեռուստատեսության հաղորդավար կամ երաժիշտ, կամ որպես մարզիկ` իր գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործչի կամ մարզիկի` որպես այդպիսին իրականացրած գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, անկախ 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներից, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից` Պայմանավորվող պետության ռեզիդենտի` որպես արվեստի գործիչ կամ մարզիկ իր գործունեությունից ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ պետությունում, եթե այդ գործունեությունը իրականացվել է մյուս Պայմանավորվող պետությունում` երկու Պայմանավորվող պետությունների հավանությանն արժանացած մշակութային և մարզական փոխանակման ծրագրերի շրջանակներում:

## Հոդված 17

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ

1. 18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների պահպանմամբ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին նախկին վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

2. Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության սոցիալական ապահովության օրենսդրության համաձայն վճարվող կենսաթոշակները և այլ վճարները ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

3. Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված կենսաթոշակներն ու համանման այլ վարձատրությունը (ներառյալ միանվագ վճարները) ենթակա են հարկման միայն առաջինը նշված պետությունում, եթե նման վճարները ստացվել են ստացողի կողմից կամ նրա անունից կենսաթոշակային ծրագրի շրջանակներում կատարված կամ կատարվելիք հատկացումներից, և այդ վճարումները, հատկացումները կամ կենսաթոշակները կամ համանման այլ վարձատրությունը ենթակա են հարկման առաջինը նշված պետությունում՝ իր հարկային օրենքների դրույթներին համապատասխան:

## Հոդված 18

## ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից այդ պետությանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձերը, ռոճիկները և համանման այլ վարձատրությունը ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

բ) Սակայն, այդպիսի աշխատավարձերը, ռոճիկները և համանման այլ վարձատրությունը ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ պետությունում, և ֆիզիկական անձն այդ պետության ռեզիդենտ է, որը

i) այդ պետության քաղաքացի է, կամ

ii) չի դարձել այդ պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից ֆիզիկական անձին՝ այդ պետությանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց վճարված կենսաթոշակները կամ համանման այլ վարձատրությունը ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունը ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձն այդ պետության ռեզիդենտ է և քաղաքացի:

3. 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են այն ծառայությունների մատուցման դիմաց ստացված աշխատավարձերի, ռոճիկների, կենսաթոշակների և համանման այլ վարձատրության նկատմամբ, որոնք կապված են Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ:

## Հոդված 19

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ուսանողը կամ վերապատրաստվողը, որը հանդիսանում կամ, անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը, հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ և որը գտնվում է առաջինը նշված պետությունում բացառապես իր ուսման կամ վերապատրաստման նպատակով, այդ պետությունում չի հարկվում իր ապրելու, ուսանելու կամ վերապատրաստվելու համար ստացած վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումները առաջանում են այդ պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

## Հոդված 20

## ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԸ

1. Ֆիզիկական անձը, ով Պայմանավորվող պետություն է ժամանել համալսարանում, քոլեջում, դպրոցում կամ այդ պետությունում արտոնագրված այլ կրթական հաստատությունում դասավանդելու կամ հետազոտություն կատարելու նպատակով և ով հանդիսանում կամ, անմիջապես մինչև ժամանելը, հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, այդպիսի դասավանդման կամ հետազոտության համար ստացած վարձատրության մասով առաջինը նշված պետությունում կազատվի հարկումից՝ այդ նպատակի համար նրա առաջին ժամանման օրվանից երկու տարին չգերազանցող ժամանակահատվածում, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Սույն Հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում հետազոտությունից ստացվող վարձատրության նկատմամբ, եթե այսպիսի հետազոտությունը կատարվում է ոչ հասարակական, այլ հիմնականում որոշակի անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

## Հոդված 21

## ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չնշված եկամտի տարրերը, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից բացի այլ եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ,

ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվել է եկամուտը, իրապես կապված է այդպիսի տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

## Հոդված 22

## ԳՈՒՅՔԸ

1. 6-րդ հոդվածում նշված, անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող պետությունում տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի, օդանավերի և ավտոմոբիլային փոխադրամիջոցների և ներքին ջրային փոխադրումներում ընդգրկված նավակների և այդպիսի նավերի, օդանավերի, ավտոմոբիլային փոխադրամիջոցների և նավակների շահագործմանը վերաբերող՝ շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի մյուս բոլոր տարրերը ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

## Հոդված 23

## ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Հայաստանում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպով.

ա) այն դեպքում, երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որը, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել Լյուքսեմբուրգում, ապա Հայաստանը թույլ է տալիս՝

i) նվազեցնել այդ ռեզիդենտի եկամտի հարկից Լյուքսեմբուրգում վճարված եկամտահարկին հավասար գումար.

ii) նվազեցնել այդ ռեզիդենտի գույքի վրա դրվող հարկից Լյուքսեմբուրգում վճարված գույքահարկին հավասար գումար:

Սակայն, այդպիսի նվազեցումը, ցանկացած դեպքում, չպետք է գերազանցի մինչև նվազեցման տրամադրումը հաշվարկված եկամտահարկի կամ գույքահարկի այն մասը, որը, հանգամանքներից կախված, վերագրելի է այն եկամտին կամ գույքին, որը կարող է հարկվել Լյուքսեմբուրգում.

բ) այն դեպքում, երբ սույն Կոնվենցիայի ցանկացած դրույթին համապատասխան, Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը Հայաստանում ազատված է հարկումից, Հայաստանը, այնուամենայնիվ, այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի նկատմամբ հարկի գումարը հաշվարկելիս կարող է հաշվի առնել ազատված եկամուտը կամ գույքը:

2. Լյուքսեմբուրգում, կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ Լյուքսեմբուրգի օրենքի դրույթների պահպանմամբ, որոնք չեն ազդում սույն Կոնվենցիայի ընդհանուր սկզբունքների վրա, կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ.

ա) այն դեպքում, երբ Լյուքսեմբուրգի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որը, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել Հայաստանում, ապա Լյուքսեմբուրգը, «բ» և «գ» ենթակետերի պահպանմամբ, այդպիսի եկամուտն ու գույքն ազատում է հարկերից, սակայն, ռեզիդենտի եկամտի և գույքի մնացած մասի նկատմամբ հարկի մեծությունը հաշվարկելու նպատակով, կարող է կիրառել հարկի նույն դրույքաչափերը, որոնք կիրառվում են հարկից չազատված եկամտի և գույքի համար.

բ) այն դեպքում, երբ Լյուքսեմբուրգի ռեզիդենտը ստանում է եկամուտ, որը 10-րդ, 11-րդ, 12-րդ և 16-րդ հոդվածների դրույթներին համապատասխան կարող է հարկվել Հայաստանում, Լյուքսեմբուրգը պետք է թույլատրի նվազեցումներ կատարել ֆիզիկական անձանց եկամտահարկից կամ այդ ռեզիդենտի կորպորատիվ հարկից Հայաստանում վճարված հարկի գումարի չափով: Այնուամենայնիվ, նման նվազեցումը չի կարող գերազանցել հարկի այն մասը, որը հաշվարկվել էր մինչ նվազեցումը կատարելը, որը վերագրվում է Հայաստանում ստացված եկամտի տարրերին.

գ) «ա» ենթակետի դրույթները չեն կիրառվում Լյուքսեմբուրգի ռեզիդենտի ստացած եկամտի և տնօրինվող գույքի նկատմամբ, եթե Հայաստանը կիրառում է սույն Կոնվենցիայի դրույթները՝ նման եկամուտը և գույքը հարկից ազատելու համար կամ այդպիսի եկամտի նկատմամբ կիրառում է 10-րդ հոդվածի 2-րդ կետի, 11-րդ և 12-րդ հոդվածների դրույթները:

## Հոդված 24

## ՈՉ ԽՏՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները չեն ենթարկվում մյուս Պայմանավորվող պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության կատարման՝ մասնավորապես կապված ռեզիդենտության հետ, քան հարկումը ու դրա հետ կապված պարտավորությունների կատարումն է, որոնց, միևնույն հանգամանքների դեպքում, ենթարկվում կամ կարող են ենթարկվել այդ մյուս պետության քաղաքացիները: Անկախ 1-ին հոդվածի դրույթներից՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ համարվող քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, քան հարկումը և դրա հետ կապված

պարտավորության կատարումն է, որոնց այդ պետության քաղաքացիները միևնույն հանգամանքներում, մասնավորապես ռեզիդենտության դեպքում, ենթարկվում կամ կարող են ենթարկվել:

3. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի հարկումը այդ մյուս պետությունում չպետք է լինի նվազ բարենպաստ, քան համանման գործունեություն իրականացնող այդ մյուս պետության ձեռնարկությունների հարկումը: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր տրամադրելու, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթիները և այլ վճարումները, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով, ենթակա են նվազեցման նույն պայմաններով այնպես, ինչպես եթե դրանք վճարված լինեին առաջինը նշված պետության ռեզիդենտին: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի նկատմամբ, այդպիսի ձեռնարկության հարկման ենթակա գույքի որոշման նպատակով, ենթակա է նվազեցման նույն պայմաններով այնպես, ինչպես եթե դա նվազեցվեր առաջինը նշված պետության ռեզիդենտի համար:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է այդ մյուս պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը նշված պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, քան առաջինը նշված պետության այլ նման ձեռնարկությունները:

6. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են սույն Կոնվենցիայում ընդգրկված հարկերի նկատմամբ:

## Հոդված 25

## ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկմանը, ապա ինքը կարող է, անկախ այդ պետությունների ներպետական իրավունքով նախատեսված պաշտպանության միջոցներից, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող

պետության իրավասու մարմնին, որի քաղաքացին է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը առարկությունը համարում է արդարացի, և եթե ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ` սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է կիրառվի անկախ Պայմանավորվող պետությունների ներպետական իրավունքում առկա որևէ ժամանակային սահմանափակումներից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացած ցանկացած դժվարություն կամ կասկած կձգտեն լուծել փոխադարձ համաձայնությամբ: Նրանք կարող են նաև համատեղ խորհրդակցել` Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ, ներառյալ` իրենցից կամ իրենց ներկայացուցիչներից բաղկացած միավորված հանձնաժողովի միջոցով:

### Հոդված 26

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են այնպիսի տեղեկություններ, որոնք ենթադրաբար անհրաժեշտ են սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ Պայմանավորվող պետությունների կամ նրանց իշխանության տեղական մարմինների կողմից սահմանված ցանկացած տեսակի և բնույթի հարկերին վերաբերող ներպետական օրենսդրության կիրառման կամ կատարման համար` այնքանով, որքանով սույն փաստաթղթով նախատեսված հարկումը չի հակասում Կոնվենցիային: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության կողմից 1-ին կետի համաձայն ստացված ցանկացած տեղեկություն պետք է համարվի գաղտնի այնպես, ինչպես այդ պետության ներպետական օրենքների համաձայն ստացված տեղեկությունը, և պետք է բացահայտվի միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղված են 1-ին կետում նշված հարկերի գնահատմամբ կամ հավաքմամբ, հարկադիր գանձմամբ կամ դատական հետապնդմամբ, դրանց հետ կապված բողոքարկումների քննարկմամբ կամ վերը նշվածը վերահսկելով: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկությունները պետք է օգտագործեն միայն այդպիսի նպատակներով: Նրանք կարող են տեղեկությունները հրապարակել դռնբաց դատական նիստի ընթացքում կամ դատարանի որոշումներում:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվում որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործելակերպին հակասող վարչական միջոցներ,

բ) ներկայացնելու տեղեկություններ, որոնք հասանելի չեն այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչարարության ընթացքում,

գ) ներկայացնելու տեղեկություններ, որոնք բացահայտում են ցանկացած առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ՝ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է հանրային կարգին:

4. Եթե Պայմանավորվող պետությունը դիմում է սույն հոդվածին համապատասխան տեղեկություն ստանալու համար, մյուս Պայմանավորվող պետությունը պետք է օգտագործի իր տեղեկությունների հավաքման միջոցները՝ պահանջվող տեղեկությունը ձեռք բերելու համար, եթե նույնիսկ այդ մյուս պետությանն այդպիսի տեղեկություն անհրաժեշտ չէ իր սեփական հարկման նպատակներով: Նախորդ նախադասության մեջ նշված պարտավորությունը սահմանափակվում է 3-րդ կետով, բայց ոչ մի դեպքում այդպիսի սահմանափակումները չեն մեկնաբանվում որպես Պայմանավորվող պետությանն իրավունք տվող՝ մերժելու տեղեկության տրամադրումը միայն այն պատճառով, որ նա չունի ներքին շահագրգռվածություն այդպիսի տեղեկության վերաբերյալ:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվում որպես Պայմանավորվող պետությանը իրավունք տվող՝ մերժելու դիմումի հիման վրա տեղեկության տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկությունը տնօրինվում է բանկի, այլ ֆինանսական հաստատության, հավատարմագրված անձի կամ գործակալությունում աշխատող կամ որպես հոգաբարձու հանդես եկող անձի կողմից, կամ՝ որ վերաբերում է անձի սեփականության շահերին:

## Հոդված 27

## ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի սահմանափակում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր նորմերի կամ հատուկ համաձայնագրերի դրույթների համաձայն տրամադրված հարկային արտոնությունները:

## Հոդված 28

## ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում են միմյանց սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրենց ներպետական օրենքներով պահանջվող ընթացակարգերի կատարման մասին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ ծանուցումներից վերջինն ստանալու օրվանից և դրա դրույթները գործում են.

ա) Հայաստանում.

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամուտների նկատմամբ.

ii) եկամտի և գույքի մյուս հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

բ) Լյուքսեմբուրգում.

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամուտների նկատմամբ.

ii) եկամտի և գույքի մյուս հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար վճարման ենթակա հարկերի համար:

## Հոդված 29
## ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմնա մինչև Պայմանավորվող պետության կողմից դադարեցվելը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը դիվանագիտական ուղիներով կարող է դադարեցնել Կոնվենցիայի գործողությունը՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարի հետո ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ գրավոր ծանուցելով դադարեցման մասին:

2. Կոնվենցիան դադարում է գործել.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցումը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամուտների նկատմամբ.

բ) գույքի և եկամտի այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցումը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող ցանկացած ֆինանսական տարվա համար վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Լյուքսեմբուրգ քաղաքում, 2009 թվականի հունիսի 23 -ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն, ֆրանսերեն և անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ | ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ |
| --- | --- |
|  |  |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիան ստորագրելիս ներքոստորագրյալները համաձայնություն են ձեռք բերել հետևյալ դրույթների շուրջ, որոնք կազմում են սույն Կոնվենցիայի անբաժանելի մասը:

**I. 3–րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետի, 4–րդ հոդվածի 3–րդ կետի, 8–րդ հոդվածի 1–ին և 2–րդ կետերի, 13–րդ հոդվածի 3–րդ կետի, 14–րդ հոդվածի 3–րդ կետի և 22–րդ հոդվածի 3–րդ կետի առնչությամբ**

Ֆիզիկական անձից բացի այլ անձի փաստացի կառավարման վայրը նշանակում է՝ այն վայրը, որտեղ տեղի է ունենում այդպիսի անձի կառավարմանն ուղղված գործունեությունը, գործերի վարումը և տոկոսների կառավարումը: Որոշելու համար, թե որտեղ է գտնվում այդ վայրը, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափորոշիչները.

– այն վայրը, որտեղ տեղի են ունենում բաժնետերի ընդհանուր ժողովները.

– այն վայրը, որտեղ հանդիպում է տնօրենների խորհուրդը.

– այն վայրը, որը այդպիսի անձի ամենօրյա ղեկավարման կենտրոնն է. պետք է հաշվի առնել այնպիսի հարցեր, ինչպիսիք են տնօրինության, առևտրային վարչության, գլխավոր հաշվապահության, ինչպես նաև արխիվների գտնվելու վայրերը:

Տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայում է վերջինը նշված չափորոշիչը:

Հասկանալի է, որ այն փաստը, որ ֆիզիկական անձից բացի այլ անձի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ֆիզիկական անձից բացի այլ անձի կողմից, որը Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, չի դիտարկում առաջինը նշված անձին այդ մյուս պետության քաղաքացի:

**II. 5–րդ հոդվածի 4–րդ կետի առնչությամբ**

4–րդ կետի «ա» և «բ» ենթակետերի նպատակներով՝ հասկանալի է, որ «առաքում» տերմինը չի ներառում ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայրում ապրանքների և արտադրանքի վաճառքը:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Լյուքսեմբուրգ քաղաքում, 2009 թվականի հունիսի 23 – ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ֆրանսերեն և անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ | ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ |
| --- | --- |